













Digitized by the Internet Archive  
in 2007 with funding from  
Microsoft Corporation

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ

---

A B R I E F

G R A M M A R

OF THE ENGLISH LANGUAGE

THE HISTORY OF

THE KINGDOM OF GREAT BRITAIN

FROM THE EARLIEST PERIODS TO THE PRESENT

A HISTORY

OF GREAT BRITAIN

BY THE REV. JOHN GAY

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ


# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՅ

ԱԻԱՆԴԵԱԼ Ի ՔՍԱՆ ԴԱՍՍ

Ի

Հ . Ա . ԳՈՒՐԳԵՆԵԱՆ Մ . Մ .



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս . ՂԱԶԱՐՈՒ

1853

200000

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1200 EAST 58TH STREET

CHICAGO, ILL. 60637



UNIVERSITY OF CHICAGO


LIBRARY

3781

**A BRIEF**  
**GRAMMAR**  
**OF THE ENGLISH LANGUAGE**  
**EXPLAINED IN TWENTY LESSONS**

BY

**REV. A. KURKEN M. M.**



**V E N I C E**

**S. LAZARUS ARMENIAN COLLEGE**

**1853**

A B R I E F

OF THE

OF THE

OF THE

OF

OF THE

The Armenian is a rich language, and would amply repay any one the trouble of learning it.

LORD BYRON

TO M.<sup>r</sup> MOORE, 5 Dec: 1816

OF THE

OF THE

OF

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Եթէ նախապատիւ ընտրութիւն լեզուաց՝ որով խրախուսիմք յուսումն նոցին թեակոխել, 'ի բազմապատիկ յօգտակարութիւնս նոցին հաստատեալ է, ապա և անգլիականն բարբառ իրաւապէս դասեսցի 'ի շարս կարևորագունից իւրով յոքնագիմի շահաւէտութեամբքն, և արժանաւոր ընծայեսցի ջանից և վաստակոց՝ որոց յուսումն նորին պարապել ախորժեսցեն. և զոր զմերոյս բարբառոյ վկայեաց քերթող նոցին հռչակաւոր՝ եթէ « Ճոխ է բարբառս, և առատապէս փոխատրեսցէ զվաստակս յուսումն նորին տքնելոց », զնոյն մեզ 'ի դէպ է զլեզուէ նոցա համարձակագոյնս թերևս բարբառել. որչափ զի վաստակ 'ի սմա ոչ այնչափ քրտնաջան պահանջի 'ի մերաղնեսոյց յրմբռնել զանգլիացին, որչափ յեւրոպացւոց անտի՝ որ յանսպառ գանձս ճոխութեան մերոյս հսկել միայն կամիցին :

Ձանց զայլովքն արարեալ զբարեմասնութեամբքն՝ յերիս միայն նկատեսցուք զշահաբեր արգիւնս լեզուիս, 'ի բանագնացութիւնս տեսչութեանց, յարարս վաճառականութեան, և 'ի ճոխութիւնս դարբութեան նոցա :

Ի յաճախել օր քան զօր արևմտեայց ընդ արևելեայցս կցորդութեան և մեր ընդ նոսա, մարթ է որոց գիտակ իցեն լեզուիս յազգէս 'մերմէ՝ 'ի բազմապատիկ կարևոր գործս պետութեանն լինել ձեռնտու, և յաջողել իսկ 'ի նոսին՝ յանձանց 'ի փառս և ազգիս 'ի պարծանս. որպէս 'ի Թարգմանութիւնս ատենից, դեսսպանատանց և պաշտօնատանց՝ 'ի մերում աշխարհիս 'ի մայր քաղաքաց պետութեանս. և եթէ յաշխարհի անդ Բրիտանական պետութեան՝ իբրու

բանագնացս և նոտարս դեսպանաց Օսմանեան պետութեան : Իսկ վասն այնոցիկ 'ի մերազնեայց որոց պանդխտեալ բնակիցեն յաշխարհս հեռաւորս՝ ընդ հզօր հովանեաւ անգլիականին պետութեան , որպէս 'ի Հնդկիս և 'ի Կղզիս հարաւակողմանցն Ասիոյ , միակ լեզու նոցա և 'ի կենցաղական կեանս իսկ՝ անգլիականն համարի բարբառ , և նովին վարին և ատեանք դատատանաց և ակմբարանք շահավաճառուց . յորմէ ինքնին 'ի յայս գայ կարևորութիւն բարբառոյս հնդկաբնակ ազգակցաց մերոց , որոց չէ բաւական հրահանգք և եթ խօսից , այլ և անթերի ծանօթութիւն դպրութեան :

Իսկ ըստ երկրորդին զոր ասացաք , սեսանեմք զԱնգլիացին և զհամադգիս նոցա զԱմերիկացիս Միացեալ պետութեանցն՝ որոց լեզու զոյգ հասարակ անգլիականն է , սիեղերագրաւ վաճառաշահութեամբն՝ գերամբարձ անցեալ քան զամենայն ազննս աշխարհի , և ընդ ամենեցուն նոցա 'ի կցորդութիւն սուրևառութեան շողկապեալ , և յամենայն քաղաքս արևելից հաստատեալ զհամբարս իւրեանց անսղառ ճոխութեանց : Ասալ սպա ակներև յանդիմանի՝ եթէ և մերոց համազգեաց՝ որոց ակն եղեալ է յարդիւնարար վաստակս սուրևառիկ վաճառուց , կարևոր է յոյժ բարբառս . և այնոցիկ որոց յաշխարհս նոցին և 'ի միջի նոցա պանդխտեալ իցեն , զի չմարթէ յօտար երկրի և անգէտ բարբառոյ ազգին յաջողել 'ի վաստակս՝ նիւթական և եթ հրահանգօք զըուցարութեան . և նոցա ուրք յիւրեանց աշխարհին մնալով՝ բարգաւաճել խնդրեսցեն 'ի շահավաճառս , և կամիցին ընդ հռչակաւոր վաճառատանց Եւրոսոյս ունել կցորդութիւն սուրևառութեան : Չասացից և վասն երիտասարդաց սոգգիս թէ քանի՞ օգտամատոյց լիցի նոցա անգլիականն , յորժամ անբաւականք 'ի կանգնել զառանձինն վաճառատունս՝ կամիցին իբրև գործակալս և դպիրս արբանեկել մերազնեայց և օտարաց 'ի շահաստան քաղաքս մեր . ձեռնպատրաստ ունելով զերկոսին կատարելութիւնս , զարդարն ասեմ և զա-

չալուրջն անսուտութիւն , որով իրաւամբ իսկ համբաւեալ է ազգս 'ի նոցունց իսկ յերոսոստացոց , և զարեւելեան բարբառոյ իրիք զանվրէպ գիտութիւն , որ կարի կարեւորն է այլալեզու վաճառականաց յաշխարհս մեր գաղթելոց . որոց առ հասարակ անգէտք գոլով բարբառոյ արեւելեայց , այնպիսեաց կարօտին յաջողակ և լեզուագէտ ստասարաց : Սովինք գիւրաւ հորդի և ճանասարհ կցորդութեան արեւելայցո ընդ հնդկաբնակ եղբարս համազգիս , որք թէպէս բարգաւաճք 'ի տուրևառս վաճառուց ընդ եւրոպական ազինս , այլ ոչինչ կցորդութիւն է նոցս ընդ իւրեանց ազգակիցս , զոր և թախանձանօք սղգէր մեզ յայտոսիկ աւուրս ոմն 'ի մտերմաց մերոց 'ի ճաւայ :

Սակս ամենայնի այսորիկ կարևոր յոյժ համարիմք զուսուսն անգլիական բարբառոյն 'ի վարժարանս ազգիս , որ վասն չլակասեն յազգիս և Քերականք և Բառագիրք և թարգմանութիւնք . նախահոգակ քան զմեզ լեալ յայտմ բազմավաստակ հարց մերոց առաջնոց , որոց ջան և քիրտն յանձին բերեալ է՝ դիւրել մեզ և այլոց ուսանելեաց ղբարբառն « Դժուարին , այլ ոչ և անյաղթելի » , որպէս զմերոյս վիպեաց գոլ աշխարհաբարոզն Պայրըն :

Նա և նոքին որք 'ի բանասէր հրահանգաց բերեալք դան յուսուսն ազգ ազգ լեզուաց , ոչ և նոցս անչահաբեր հանգիւպեսցի անգլիականին ծանօթութիւն . զի և բնախօսութեամբն հզօր է և գեղեցիկ , և ըստ մատենագրութեանն ճիս , ընտիր և բազմազուարճ . որպէս յառաջիկայս է տեսանել 'ի սակաւամասնեոյ ծանօթութենէս՝ զոր կարևոր համարեցաք կարգել ղյառաջատութենէ բարբառոյ նոցին և գրպրութեան :

Ի յօրինուած համառօտութեանս՝ սակս առաջնոյ մասին որ են Կանոնք քերականականք , առաջնորդ մեզ կալաք զՔերականութիւնն Վերկանի , զտպագրեալն բազում անգամ յաւելուածովքն 'ի Սատլերէ (1844) , և զՆոր քերականու-

Թիւնն Պրիսիոյ (1841) . ինչ ինչ զեղչեալ յաւելորդաց , և զայլ կարևորս յայլուստ ընդ նոցա փոխանակեալ , և իւրաքանչիւր դասուց բաց 'ի վարժիցն 'ի գործադրութիւն կանոնաց աւանդելոց՝ յաւելաք և կրկին կրթութիւնս : Իսկ վասն երկրորդին՝ յորում են զանազան հրահանգք քերականականք կամ կրթութիւնք լեզուագիտութեան , առաք յօրինակ զՔերականութիւնն Ռոսկերթսնի (1846) , որ սակա նորահաստատ գրութեանն ընդունելի յոյժ գտաւ այժմեան բանասիրաց , և որ օգտամատոյց յոյժ եղիցի և մերոյ ազգիս վարժապետաց և աշակերտաց . յայսմ մասին որչափ ինչ կարևոր թուեցաւ մեզ՝ ոչ խորշեցաք յերկայնութենէ օրինակացն և կրթութեանց . զի անգլիական գիրք դժուարագիւտք են յարևելս 'ի պէտս մանկանց , և դժուարագոյն և ոնոցին ընարութիւն . և քանզի առանձինն իմն նիւթական պիտոյից շահաւոր գործել զբարբառս ակն եդեալ էր , վասն որոյ ոչ դանդաղեցաք զբաղմապատիկ գործառնութեանց զլեզանակս գրութեան յաճախել 'ի ամս : Սակս Առագանութեան և Ուղլագրութեան և հնչման տառից և բառից՝ որ դոպցես դժուարագոյն մասն է անգլիականին , զի՛նդանի ձայն վարժապետի ազգաւ անգլիացւոյ և մայրաքաղաքացւոյ ունէաք մեզ երախտաւոր օժանդակ , բաց 'ի Բաւադրոցն ձեռնտուութենէ . որսէս և վասն մանրախոյզ ուղլագրութեան անսայթաք տպագրին՝ զսիրայորգոր մտադիր Չանս հոգեհարազաս սիրելէաց : — Պատշաճագոյն դատեցաւ բաղմաց 'ի բարբառ գրոց զսա աւանդել . մի զի դիւրագոյն իցէ զուգակչիւ բաղլատութիւն կանոնաց կրկին լեզուաց՝ հայկականին և անգլիականին . և երկրորդ անգամ զի և լրութեան ազգիս լիցի ընտել և դիւրահաս . զի աշխարհիկ բարբառ մեր ըստ դաւառաց գաւառաց առեալ փոփոխումն , և ամենեկն իսկ այլակերպեալ անհաս ընծայի բաղմաց . իսկ գրոցն ամենայն ուրեք նոյն է և անփոփոխ , և ամենեցուն առ հասարակ զնոյն միտս ընծայէ : Որոյ վասն և պարզագոյն՝ զչարսագրածն կարգեցաք , զի դիւ-

րալուր իցէ ամենեցուն . և մանաւանդ 'ի վարժս իւրաքանչիւր դասուց կամակար իսկ խոտորեցաք 'ի հայացի վայելուծե-  
նէն , զի հեշտին իցէ աշակերտաց յանգլիացի բան շրջել զնո-  
սա . զի ոչ եթէ զառաջնոյն զգեղեցկուծիւն առաջի կայր մեզ  
ածել 'ի հանդէս , այլ զերկրորդին զբնախօսուծիւն և ըզ-  
կազմուծիւն . և 'ի ցուցանել անդ զխտիրն որ ընդ մէջ երկուց  
լեզուացս , հնոյն ասեմ' և նորոյս , առաւել արժան էր խո-  
նարհել 'ի սլարզաբանուծիւն վերջնոյս , քան ընդ առաջնոյն  
բարձրաթուիչ ամբառնալ :

Ահն ունիմք զի կարօտուծիւն աղբիս մանաւանդ , քան դոյզն  
գործոյս կատարելուծիւն , արգահատեսցէ զներուամն թողու-  
ծեան սակա թերուծեանցն սպրդեւոց . և զարդիս սովին շա-  
տացեալ , կատարելագունի վաստակոց ահնկալել 'ի նոցին իսկ  
յուսանելեացն ջանից , ըստ անկեղծաւոր բանիցն Արատեայ

Si quid novisti rectius istis,  
Candidus imperti; si non his utere mecum.  
Horat. Epist. lib. I, 6, 68.

### ԲԱՐԲԱՌ ԱՆԳԼԻԱՅԻՈՑ

ԲԱՐԲԱՌ անգլիական' որ վարի'ի գիր և'ի բան Անգլիա , յարեւելան և 'ի հարա-  
ւայինն Սկոտիա , 'ի մասն մի Իւլանտայ , 'ի հրահանգեալ դասուէ բնակչաց Բրիտանա-  
կան կղզեացն Հէթլէնտ , Ժէրսի և Վէրնսի , 'ի գաղթականաց անգլեացւոց յայլեայլ  
մասունս ախտարհի , յարեւելան Հնդկիս և 'ի Միացեալ պետութիւնս Սմերիկայ . և որ  
յաճախ ըի 'ի Հաննովէր , 'ի Յոնիական կղզիս , 'ի խումբս Մելիտիոյ , 'ի Փորթուկալ ,  
'ի Պրագիլ և 'ի Հայիթի , յանգլո-սաքսոնէն և 'ի նորմանդ-փրանկականէն ունի զծա-  
գումն , խառնուրդ իմն բերելով 'ի կեղտ և 'ի հռոմական լեզուաց (1) , որ և քան զայլ  
ամենայն լեզուս Եւրոպայ պարզագոյն է և միավանկ , և առաւել քան զնոսա այլոզան ըստ  
զրութեանն և ըստ հնչման :

Անգլո-սաքսոնն աճուանեալ լեզու անդստին 'ի Ե դարէ մինչև ցԺԱ հասարակաց  
բարբառ էր Բրետանեան դաշտաց , անխառն մնացեալ ամենեին ընդ ամս վաթսուն յորս  
ձգեցաւ դանիացւոցն պետութիւն , զի և սոցս բարբառ' որ էր սկանդինավանն , հարազատ  
համոտայր համարէր ընդ առաջնոյն . այլ յորժամ Մշխարհակալն անուանեալ Գուլիէլ-  
մոս նուաճեաց և զտահմանս Անգլիոյ , պատուէր հրամանի ետ պարտելոցն զյախընթորն  
վարել լեզու որ կոչէր նորմանդ-փրանկաց . յորմէ բազում բառք եկամուտք սպրդեցան

(1) Ըստ վերջնոց ստուգագոյն խուզարկութեանցն Թոմիէլի 'ի 13,366 բառից անգլիա-  
կան բարբառոյ' 13,350 'ի տեւոնական լեզուաց առեալ են , 29,884 'ի հռոմականաց ( իս-  
սպան , փորթ . են ) , 88 'ի կեղտաց , և 294 յանսոյց աղբերաց :

մտին յառաջին լեզու նոցա, թէպէտ և այլափոխեալք ըստ հնչմանն և ըստ կազմութեան, որպէս բնախօսութիւն բարբառոյ նոցին պահանջէր: Այլ յետ սակաւուց 'ի բորբոքել պատերազմաց ընդ անգլիացիս և ընդ փրանսիս, ասպետքն նորմանդացիք որ նուաճեալ ունեին զԱնգլիա՝ 'ի բաց թողին կամակար զլեզու բնագաւառ հայրենեաց իւրեանց, և սկսան վարել 'ի բարբառ նուաճելոցն:

Յայնմ՝ հետէ տակաւ յարդ և 'ի զարդ գայր բարբառն, թէպէտ կարի յամբողջոյնս. մինչ յետոյ ուրեմն առ Եզուարդաւ Ա 'ի վախճան ժԳ ին տեսաւ 'ի նմա զոյնք ինչ բարգաւաճութեան: Առ Բ Եզուարդաւ երեկցան Մէնէսթրէլքն անուանեալ քերթոք աշխարհաճուք: Իսկ յաւուրս Եզուարդայ Գ փրանկականն 'ի սպառ տարազեցաւ յատենից պետութեանն առնաձինն հրամանագրով մեծի Խորհրդարանին, և վճռեցաւ զի անգլեականն և և և թ չամբոքնսի օրինաւոր բարբառ պետութեանն: Ի ժԺ գարու և և հրարորքք ծաւալեալ հեռ և ռուսթիւն 'ի մեջ երկուց աղանցն, որ յառակ սպա ընկաւ, 'ի սպառ անջրպետեաց զսովորթթս, զբարբառ և զգարութիւն զանգլիացւոցն և զփրանկաց:

Առ Հներկիսուի Ը սկսաւ անգլիականն լեզու հպատակել օրինաց, և ճորտացաւ յոյժ յոյն և լատին ասացուածովք, շեշտաբանութիւնք բառից մեկին ևս կարգեցան, և յառգ քանութեանն մեծամեծ փոփոխութիւնք գործեցան, ըստ նմանութեան իտալացւոցն՝ չափու, որ առաւել քան զհնոցն չափս պատշաճագոյն գատէր անգլիական բարբառոյ, վասն ճշդութեանն և քաղցրաձայնութեան: Այլ յետ Չոսթրի (1530) ոչ որ զհետ եղև 'ի յղկել և 'ի թեքել զբարբառն, մինչև յարեան Սիֆէնսթր և Հէյքսփիր: Յետ նոցա Գրու մուէլ և այլք ըստ նմանէ՝ նորօրինակ իմն հնարեցին լեզու խորհրդական և ծաղրական. այլ Միլթըն առ ոչ ինչ համարեալ զայն, ճոխացոյց զբարբառ իւր նորահրաշ կազմութեամբ և խեղճ ձևովք բանից. Աւոլլըր և Տրայտըն սկսան բարեգարգել զնոյն և զովեմին նկարագիր տպաւորեցին 'ի նմա. իսկ Սուիֆթ, Էտիսըն, Փոու և Սթիլ շորթ պար առեալ զԱննայիւ, ասհղ և երեկե հանդիսացուցին զնոյն՝ մեծամայելուչ և չքնաղ ասացուածովք բանից և աշխուժիւ յորձակ և 'ի չափական բանս:

ՅԺԸ ում՝ դարու 'ի նորանոր յերանակս բանից զարգացաւ անգլիականն բարբառ՝ օժանդակեալ 'ի բանախօսութեանց և 'ի վիճմանց Խորհրդարանին, և ընդարձակեալ ծաւալեցաւ ընդ ճարտարութեան ազգին, և ընդ վաճառաշահ կցորդութեանցն՝ յամնայն ազգաց Եւրոպայ յաճանեաց իւր բառս նորանորս. այլ այնպէս սեպհակսնեաց զնոսա և խառնեաց յիւր լեզու: զի հիմնական բարբառն՝ այն է սաքսոնն, միշտ արտափայլէ 'ի նմա. մինչ զի գոգցես ամենայն արմատականք զհնագոյն բարբառոցն բերն զնախատիպս. որպէս հանդերձեալ եմք և օրինակաւ իւրք բացայայտել զոյն 'ի հրահանգս Կերականիս: Ըստ հնչմանն թերես հնչեղազոյն և զայնակաւոր ևս էր անգլո-սաքսոնն քան զայժմու անգլիականս. այլ որ զնչ և ինչէ, է սա արդարեւ բարբառ ձոնս, զիւրաթեք, կորովի, վեսմ՝ և գեղեցիկ նկարագրքն պերճացեալ. և համառօտ ասել՝ է սա բարբառ սրգասաբեր վաճառաշահութեան, տոնենալով պետութեանց և տշխարհաճու ճանապարհորդաց:

### ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՅԻՈՅ

ԱՆԴԻՆ 'ի սկզբան զնկարագիր կրկին լեզուաց վերագրելոց առաջի առնէ մեջ. պարբքք և նուաքք խազմարարք Սաքսոնեանց՝ զտարերս գերմանատիպ բարբառոցն. իսկ վէպք ասպետաց, քերթուածք զիւցազնականք և չափաբերեալ պատմութիւնք ընդմանդփրանկացն բերնն զնախատիպս: Առ Եզուարդաւ Ա 'ի վեր երկին ժամանակագիրք յանգաւորք Հառքերտոսի 'ի Վլոսեսթերայ, որ թէ և ըստ մատենագրութեանն կրիցագոյն համարի, բայց ըստ քերթողութեան արժէ ինչ ոչ, — Առ Հոլքարդոսի Բ յաճախեն ոտանաւոր բանք յանգլիացի և 'ի լատին բարբառս: — Ի ժամանակաւ Սեւարդայ Գ Չոսթր անուանեալն Սատղ առաւօտին և աշակերտեալն Փեղրարայ 'ի տարազ անգլիացի պաճու ձէ գերթթուածս փրոնկաց. Ալիքիթթ թարգմանութեամբ աստուածաշունչ տառից կայուն տայ նորաթեք լեզուին: — Անուի ընդ բովանդակ գարն ժԵ խանգարին և ևս գարութիւնք. և յետոյ ուրեմն 'ի ժԶ ին միւսանգամ՝ վերակննցաղին:

Հաւրատ, կոմսն Սրբրի, Թոմաս Ուայէթ և Փիլիպպոս Միտնի նախընթաց լինին Սփէնտորի որ աշակերան էր Արիտայոյ. իսկ Ծոն Պոլ, Փրէյթըն, Էստուրտ, Լիլլոյ, Բիտ, Կէսքոնը և Մարլու կանխագուշակ լինին գալտեան Շէյքսփիրի որ հրաշացոյց գԱնգըն պատմական թատերոցն, յորդեալ շաւիղ եկեղոցն գ՛նետ, որպիսիք եղեն Պէն-Ճոնսըն, Պոմբնթ, Ֆլէյլըր, Մէսիքս՝Նէր, Չէփմէն, Հէյուուտ և Ռըլի: Չերգիծանան և զտուարածականս ճոխացուցին Ծոն Տուս և Յովս. Հոլ, զնկարագրական քերթուածոն ստեղծաբանեաց Միքայէլ Տրէյթըն. գերազանցեաց 'ի քնարականին Ուոլթըր Ռէյլի, նա ինքն գրեաց յարձակ բան զպատմութիւն տիեզերական, և Բէյմոնը նկարագրութիւն Անգլիոյ: — ՅՏ. Նէփիրը եզիտ զնշանակա համարողականին. Պէքըն հաստատեաց զփորձ առականն իմաստասիրութիւն. առ նովաւ դարձեալ զառաջինն ճոխացաւ աստեանական պերճախօտութիւն, և Ըշըր Յկ. անուանի գտաւ յեկեղեցական պատմութեան:

Եթէ դարու Ուոլլըր և Բաուլի մանր քերթուածովք կանխաձայնեցին զդարն նորու գութեան առ զշնայիւն Աննայիւ. Միլթըն զհրաշաձառն շնորհեաց քերթուած գիւցալ նական իւրոց հայրենեաց, Պրէթըր անուանի գտաւ յերգիծանոն առ Կարողօր Բ. Տրայտըն և ա զառաջինն զքննաբանական կանոնս անգլիականին, և նուրբ հանձնորոն և ճաշակաւ հրաշալի 'ի քերթորո գտաւ. Սթիլ և Էտիսըն հաստատեցին զառաջին լրագրո: Փոփ կոխեաց գ՛նետ Տրայտի առաւել ևս իմաստասիրութեամբ և բարոյախօսութեամբ. Թոմսըն ած 'ի լոյս զնկարագիր քերթուած յեղանակաց: Կատակերգութիւն կարի անպատկառ յանդիմանեցաւ 'ի թատերո, և լրենիք 'ի մատենագիրո կացին Փարքուէյր, Էթ Տրէթ, զուրոն Պրէքնկէմայ, Ուիլլըրի, Բոնկիլիւ, և երկրին կանայք Աճրա Պիին և Հուշան Աէնթրայլըր. սակաւ ինչ համատարգոյնք քան զզոտ համարին Վէնպրոկ և Սիւլըր. յերթիմական միպատմութիւնս հանձնարեղ հանդիտացաւ Ծոն Սուիթթ:

Հարագրած պատմական ոչ նոյնպէս արագ արագ զարգացաւ. միայն Պրընիթ 'ի նմաւ նութիւն Հերոդոտեայ կրթեցաւ 'ի պատմութեան իւրոց ժամանակաց. ոչ անմասն են 'ի գովութեանց և Պէքըր, Թիրլլ, Էշարտ, Թոմաս Սփրէյթ. զի ընձեռեցին նիւթօրոց գ՛նետ եկին նոցա — Լոք աշխատ եղև բազմոք 'ի զարգացումն փորձառական իմաստասիրութեան. իսկ զառաջարկականն բարգաւաճել ինդրեցին Պրըրի և Լորտ Պոլմսլոքը, այլ 'ի բազում կարեւորագոյն ինդիրս գթեցին. Նիուլթըն Իսահակ գերազանցեաց զամենեկորմք՝ 'ի խելամուտութեան անյեղի օրինաց ընութեանս: — Ի վերջ կոչ ժէ դարուս՝ յորժամ իրաւանց թագաւորին և ժողովրդեան եղաւ սահման, յայնժամ և ազատութեան մասոց և ասեկնից ցուցաւ զօրութիւն: Անդտոն 'ի ժամանակաց Գուիլիէլմոս Գ և զշնային Աննայ յիշատակին կացեալ ասեանախօք Լորտ Սոմերս, ՅՏ. Հոլթ, Աշլի, Մոնթէյլ, Թաուսհէնտ, Պէթճըրտ. այլ ապա և ևս ճոխացուցին զնոյն Հոռքերդ Ուոլփոլ, Փըլմնի, Հիփըն, Պրընըրտ, Չէսթըրֆիլտ, Հարտուիք, Արձիլ, Բարթոլէթ, և 'ի վերջէ մեծն Փիթ, մի 'ի հոյակապ ճարտարախօսաց դարուցս վերջնոց առ ժամանակոք Գէորգայ Բ. իսկ 'ի բեմականին հռչակաւորք եղեն Թիւրլթօրն և Շէրլոք: — Գուլլըր, Հոֆթօպրի, Էտիսըն և անհամեմատն 'ի քննաբանս Ծոնսըն հաստատեն զճշմարիտ և զուղղագատ սկզբունս գեղեցիկն և բարւոյն:

Ի միջոց ժԸ դարուն տեսանեմք զանգլիականն հանձար 'ի նորանոր ազգս մատենագրութեանց լեալ ձեռնրեց: Ռիչարտսըն զետհական միպատմութիւնսն հնարելով և Ֆիլմոն զծաղրականն. զորս ապա Սթէյն 'ի մի լծորդեալ՝ զնորաստեղծն և սեպհական անձինն եցոյց զմիպատմութիւն, զորոյ բազումք զփորձ առնուլ կամեցեալ՝ ոտնառեալ կասեցան. և միայն Օլիվըր Կոլտսմիթ համեմատ նմին գտաւ միոն ևեթ յիւրոց վաստակոյ: — Չեղերական քերթուածս առանձինն ջանիւ ճոխացուցին Տայլըր, Էքինսայտ, Արմօթըն, Մէտսըն, Մէրուին, Հէյլի, որոց պարագլուխ համարի մեծահանձարն Երն: — Ընդ հակառակս սոցա զնախնի պարերգսն և զնուազս նորագեցին Հէնթըն, Կրէյ, Հէմմընս, Բոլինս, Պրուս, Պիթի, Փրորի, ևն: — Կլեյվըր հորեկեաց շաւիղ գիւցազնականին, յոր համբաւատենչ հանդիտացան Չէթթըրթըն և Մաքփէրըն խմբագրիչ անհարազատ երգոցն Ոսիանու: — Թատերականն արուեստ մեծաքայլ արշաւէր ջանիւք Բուլմնի, Մըրֆի, Բըմպըրլէնտի և Հէրիտինի՝ որ հռչակաւոր եկաց և 'ի քաղաքական ճարտարախօսութեան: — Ի պատմագրութեան հոյակապք հանդիտացան Հիււս, Ռոպերթօրն և Կիպպըն. յետ

նոցա դասին Սմբէթ, Փոքս, Մէքինթոշ, Լինկարտ, Հէլէմ, Կոտուին, Ֆէրլըն, Կիլիզ, Միթֆըլտ և Ռոսթոյ: — Ի քաղաքական ճարտարիւտութեան անուանի գտան Գուլիէլմոս Փիթ, որդի առաջնոյն, Փոքս պատմաբանն, Եղմնդ Պըքք: — Էտէմ և Սմիթ՝ Տիմն արկին նորոյ գիտութեան քաղաքական տնտեսութեանս: — Ռիտ խորամուկու եղև 'ի փորձառական հոգեբանութեանս: — Պընս յերկնազարդ և 'ի կորովահանձար տաղերգութիւնս հանդիսացաւ, Բաուփըր 'ի խիտ և 'ի խիզակն նկարագրական քերթուածս. Ուրբուտըրթ՝ և Գուրիճ՝ երգեցին զիճն հիւսիսակողմանցն Վնզիլոյ. Թոմաս Մուր զգայական և զմտքաստոյսս հրաշարէտ իմաստասիրութեանք: — Վիպասնութիւնք 'ի բաժին Թողան ազգի կանանց, յորս քաջանուն հանդիսացան Տիկնայք Պըրնի, Չարլթ Սմիթ՝, Արալի, Աննա Ռէտիֆ, Լէտի Մորկէն, և այլք յովք:

Ի բնաւ առաջիկայ ԺՔ դարուս գան 'ի հանդէս երկրքին իշխանք անգլիական աշխուժից, փիպասնն Ուոլթըր Աքթ, և քերթողն Էրոտ Պայըն, երկրքին ևս աշխարհաքարոզք յԱւրոպա. առաջնոյն զճոտ գնացին ամերիկացիքն Ուոլինկիթըն Իրվին և Բուփըր, իւլանտացիքն Կրիֆիթ՝ և Պէնիմ, սկոտացիքն Ճոն Կէթ, անգլիացիք Որատ Սմիթ՝, Կրէթն, և այլք. և ևս յովք երկրորդին որպէս ցոխազոյնք և սկեպտականք: — Թատերախաղք նուազ և նուատ ևս յայտմ դարու. որպէս և նորին իսկ Պայընին. իսկ յայլ ազգս քերթուածոց նշանաւորք են Սամուէլ Ռոձըրս, Լի Հընտ, Պէրրի Գորնուէլ, Ճէմս Հոկ, ևն. իսկ 'ի կանանց Մարիամ Շուրիթ, Երատուհի կամ Ֆէլիսիա Հէմինս, Լէթիսիա Լէնտըն, և այլք: — Ի պատմականս չիք ոք զուգակիւս Հիւուր, Ռոպերթսընի և Կիպլընի, և իրաւաբան պատմութիւն Վնզիլոյ տակաւին յըզականացն է համարի: — Ի ճարտարիտոսս ստեճականս հռչակաւորք կացին Էրսթայն աշակերտեալն Մոնթէպըրիտի, Շէրիտին, Բէնիթն, Յվ. Մէքինթոշ, Լորտ Պրուկէմ և իւլանտացիքն Օ' Բոնէլ՝ որոց համբաւ կրկնուցն աշխարհածածով է: — Ի բեմականս Պիլպի, Հորպի, Փըրիսի, Ուէքֆիլտ, Փայլի, Ուէթսըն, Չարլըս Սիլըն, Հոլ և Էտէմ Բլաքք և այլք 'ի գատուէ երկնանոյն և երկցպետացն Վնզիլոյ: — Իսկ առ միտլք ժամանակք անուանիք 'ի քերթողս են Թեննիսըն, Պրատընի և Պէյլի. իսկ 'ի վիպասանից Տիքէնս և Թէէքըրի (1):

Չարդիս Ուտղութիւն 'ի վերացեալն նուազ է յՎնզիլա. իսկ գործնական կարի բարգաւաճ. Բնական մակացութիւնք զարգացեալ են յոյժ յոյժ. առանձինն աշխարհագրութիւն և բնապատմութիւն, մանաւանդ արեւելեան աշխարհաց. Իրաւագիտութիւն 'ի դադարման կայ, և Ստուածաբանութիւն անգլիացոց ոչ սժամակալի 'ի լուսոյ նորանոր գիտութեանց. Իմաստասիրութիւն փորձառական յամենայնի վերադասի քան զհայեցողականն. Գիտութիւնք վարդութեան պետութեանց, մանաւանդ քաղաքական տնտեսութիւն խնամով մշակի. Լեզուագիտութիւն՝ բաց յարեւելայցն, ոչ այնչափ մեծարի: — Վնզիլական բարբառ ճիտ է յամենայն ազգս ուսումական և ժողովրդական գրնոյ. մանաւանդ որ 'նըրջմանակն անուանին համբարք բազմապատիկ և զանազան գիտութեանց. ընդ որս և յովագոյն ազգք օրագրոց և լրագրոց, որ 'ի 1846 էին Յ00, օրականք, շաբաթականք և ամսականք. յորոց 120 տպագրէին 'ի Լընտըն. 232 ընդ բովանդակ Վնզիլա. 70 յուլանտա. 68 'ի Սկոտիա և 10 'ի Ուոլս. իսկ այժմ՝ առաւել քան զ600 ազգս օրագրոց և լրագրոց հաշուէ Վնզիլա: — Իսկ 'ի Միացեալ պետութիւնս Վալիկոյ բերուբեղուն ևս են օրրատօրական և պարբերական գրութիւնք. ըստ Վալիկեան տումարին (American almanac) յըմթացս միոյ տարւոյ առաւել քան զ100,000,000 թերթս քաղական օրագրոց սիւսին յերեսս երկրին. գրեալ թէ ամենեքին 'ի բարբառ անգլիացի. սոցա ընթերցասիրութեանն երաշխաւորէ մեզ 'ի մտոյ և հրաշալի վիպասնութիւն Տիկնոջն Հ. Պիլքը Սթաու անուանեալն Հիւոն Բեուոյն Թոմայ, որ յերեւել անդ 'ի լրս Յ00,000 արեւնակք վաճառեցան յամիսս երիս՝ միայն 'ի Միացեալ պետութիւնս անդ Վալիկայ:

(1) Գիտեա զի զովքութիւնք զմասննազբաց ըստ հարազատութեան բարբառոյն և ըստ կատարելութեան զարտութեան են, և ոչ եթէ ըստ ճշմարտութեան բանիցն 'ի պատմականս և իմաստասիրականս, և ըստ անըծութեան բարոյականին և հաւատոց 'ի քերթողականս և 'ի հռետորականս:

## Յ Ա Ն Կ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ	Սահմանք քերականական բառից . . .	1
ԱՌՌԳԱՆՈՒԹԻՒՆ	Այբուբեն և հնչույթն տառից . . .	3
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ	Կանոնք կարևորք . . . , . . .	19

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԿԱՆՈՆՔ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆՔ

ԴԱՍ Ա.	Յաղագս որոշեալ յօգիս <i>the</i> և <i>հոլովա- նշանացս of, to, from</i> . . . . .	23
ԴԱՍ Բ.	Յաղագս անորոշ յօգիցս <i>a կամ an, some</i> և <i>any</i> . . . . .	30
ԴԱՍ Գ.	Յաղագս վերջահոլով սեռականի . . . . .	36
ԴԱՍ Դ.	Յաղագս յոքնական (թուրջ անուանց) . . . . .	41
ԴԱՍ Ե.	Յաղագս սեռից անուանց . . . . .	47
ԴԱՍ Ջ.	Յաղագս ածական անուանց . . . . .	52
ԴԱՍ Է.	Յաղագս բաղդատական և գերադրական ածականաց . . . . .	57
ԴԱՍ Ը.	Յաղագս (թուական ածականաց) . . . . .	68
ԴԱՍ Թ.	Յաղագս էական գերանուանց . . . . .	75
ԴԱՍ Ճ.	Յաղագս ստացական գերանուանց . . . . .	82
ԴԱՍ ՉԱ.	Յաղագս յարաբերական և հարցական գերանուանց . . . . .	88
ԴԱՍ ՉԲ.	Յաղագս ցուցական գերանուանց . . . . .	96
ԴԱՍ ՉԳ.	Յաղագս անորոշ գերանուանց . . . . .	100
ԴԱՍ ՉԴ.	Յաղագս օժանդակ բայից . . . . .	106
ԴԱՍ ՉԵ.	Յաղագս լծորդութեան կանոնաւոր բայից . . . . .	116
	Յոռցակ անկանոն բայից . . . . .	124

ԴԱՍ ԺԶ .	Յաղագս կրաւորական, անդրադարձ, փոխադարձ, գիմնազուրկ, պակասաւոր և անդէմ՝ բայից . . . . .	135
ԴԱՍ ԺԷ .	Յաղագս ժխտական և հարցական բայից, և այլոց գիտեւեաց . . . . .	143
ԴԱՍ ԺԸ .	Յաղագս նախադրութեանց . . . . .	152
ԴԱՍ ԺԹ .	Յաղագս մակբայից, շաղկապից և ձայնարկութեանց . . . . .	159
ԴԱՍ Ի .	Յաղագս զեղջման մասանց բանի . . . . .	166
	<b>Յաղագս տաղաչափոշրեան անգլիացոց</b>	<b>172</b>

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՀՐԱՀԱՆԳԻՔ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆՔ

Ա ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Առողանութեան և Ուղղագրութեան . . . . .	181
	Համառօտագրութիւնք անգլիական լեզուի . . . . .	202
Բ ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Լուծման և Թարգմանութեան . . . . .	205
Գ ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Կաղմութեան բառից և լեզուի . . . . .	217
Դ ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Գործածութեան բայից . . . . .	239
Ե ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Բայից և նախադրութեանց նոցին . . . . .	253
Զ ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Գրութեան տոմսից և նամակաց . . . . .	295
Է ԿՐԹՈՒԹԻՒՆ .	Անգլիարէն զրուցատրութեան . . . . .	326-366



## TABLE OF THE ARMENIAN ALPHABET

PRINTING	ITALICK	NAME	SOUNDS		
Ա	ա	Ա	ա, u	ipe (pipe)	a (as in part).
Բ	բ	Բ	բ, p	pen	p soft.
Գ	գ	Գ	գ, q	kim	k, q.
Դ	դ	Դ	դ, t	tá	t soft.
Ե	ե	Ե	ե, h	yetch	ye (as in yes).
Զ	զ	Զ	զ, q	z á	z or s between two vowels.
Է	է	Է	է, k	é	e (as in met).
Ը	ը	Ը	ը, p	yet	e (as in her).
Թ	թ	Թ	թ, p	toe	t. (zure.
Ժ	ժ	Ժ	ժ, ժ	j french	s or z (as in pleasure, a-
Ի	ի	Ի	ի, ի	iny	i short (as mint).
Լ	լ	Լ	լ, լ	lun (lúnatic	l. (man ch.
Խ	խ	Խ	խ, խ	ch german	kh, like greek χ, or ger-
Ծ	ծ	Ծ	ծ, ծ	dza	dz, as italian z.
Կ	կ	Կ	կ, կ	ghien	g hard (as good).
Հ	հ	Հ	հ, հ	hoe	h.
Ձ	ձ	Ձ	ձ, ձ	tza	tz soft. (risian r.
Ղ	ղ	Ղ	ղ, ղ	ghad	gh as new greek γ, or pa-
Ճ	ճ	Ճ	ճ, ճ	dgé	j, dg (as in judge).
Մ	մ	Մ	մ, մ	mien	m.
Յ	յ	Յ	յ, յ	he	h soft in begining of words, like y in boy in the midst, and mute at the end.
Ն	ն	Ն	ն, ն	noo	n.
Շ	շ	Շ	շ, շ	sha	sh.
Ո	ո	Ո	ո, ո	wo	wo (as in worthy).

Q	z	Q	z, z	cha	ch (as in Charles).
Ŋ	uy	Ŋ	u, uy	bé	b.
Q	z	Q	z, z	ché	ch (as in cherish).
Ŋ	u	Ŋ	u, u	rá	r hard.
U	u	U	u, u	sé	s.
Ų	Ų	Ų	Ų, Ų	viev	v.
S	u	S	u, u	dune	d.
P	p	P	p, p	ré	r.
g	g	g	g, g	tzo	tz.
h	h	h	h, h	hune	u french, as du.
Φ	φ	Φ	φ, φ	pure	p.
ϕ	ϕ	ϕ	ϕ, ϕ	ké	k.
O	o	O	o, o	o	o.
Φ	φ	Φ	φ, φ	fé	f or ph.

## DIPHTHONGS

U- av or aw.

U- or U- yew. is a coalition of two letters U and  
U or U-.

U- u french as du, or u English as cube.

U- oo.



# ՅՈՒՑԱԿ ՏԱՌԻՅ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ԲՈՂՈՐԳԻՐ		ՆՕՏՐԱԳԻՐ		ԱՆՈՒՆ	ՀՆԶՈՒՄՆ.
A	a	A	a	էյ	էյ, է, ա, օ՛1.
B	b	B	b	պի	պ.
C	c	C	c	պի	պ, ա, (չ)
D	d	D	d	պի	պ. (ճ)
E	e	E	e	է	է, է, ը.
F	f	F	f	էֆ	ֆ.
G	g	G	g	ճի	ճ, ի.
H	h	H	h	էյլ	հ.
I	i	I	i	այ	այ, ի, ը.
J	j	J	j	ճէյ	ճ.
K	k	K	k	պէյ	պ կամ ք.
L	l	L	l	էլ	լ.
M	m	M	m	էմ	մ.
N	n	N	n	էն	ն.
O	o	O	o	օ	օ՛, օ՛, օօ, օօ, օ, ը.
P	p	P	p	պի	պ.
Q	q	Q	q	պիա	ք կամ ք.
R	r	R	r	ար	ար.
S	s	S	s	էս	ս, շ. (ծ, շ)
T	t	T	t	թի	թ կամ ք. (լ, շ)
U	u	U	u	իա	իա, օ, ը, ա.
V	v	V	v	վի	վ.
W	w	W	w	պըպլ իա	ա.
X	x	X	x	էա	ա կամ իշ. (+չ, շ)
Y	y	Y	y	ապ	է.
Z	z	Z	z	չէր	չ. (ծ)

**ԿՐԿՆԱՅՏՈՒՔ.**

ch	պի-էյլ.	չ. (չ, ք)
gh	ճի-էյլ.	անձայն. (ֆ)
ph	քի-էյլ.	ֆ. (լ)
sh	էս-էյլ.	չ.
th	թի-էյլ.	թի, քի (թ)
ll	պըպլ էլ.	լլ.

**ՆՐԿԱՐԱՐԱՅՏՈՒՔ.**

ae ի, ai էյ, au, aw օ (ա).

ea ի (է, էյ, ը)	ee ի, ei էյ, ի,
eo ի, ը (է), ew, eu իա (ա)	
ey էյ, ի.	
ia ի, ie ի, այ, io, ը.	
oa օ, ի, է (ա), oi, oy, այ, օօ	
ա (ը), ou օա (ը), ա, օ, ow	
օ, օա.	
ua, ա, ue աէ, ui աի, uo աօ,	
uy աի (ի, այ).	

1 Տառս a հնչի ի ի յանդեալն age անշեշտ. զոր օրինակ village, language, usage. հնչեա լիլիճ, լիկի-իճ, իա-լիճ:



# Հ Ա Մ Ե Ռ Օ Տ

## Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Բ Ա Ր Բ Ա Ռ Ո Յ



#### Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

#### Ս Ա Հ Մ Ա Ն Ք Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ի Յ

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Է արուեստ ուղիղ խօսելոյ և գրելոյ :  
Յօրն է բառ ինչ կամ մասնիկ եղեալ 'ի վերայ անուանց՝  
առ 'ի ճշգիւ սահմանել զնշանակութիւն նոցին :

Անունն կամ Գոյականն զանձինս կամ զիրս նշանակէ :

Ածականն զորպիսութիւն անձին կամ իրին ցուցանէ :

Սէան է յարաբերութիւն բառին առ արուն կամ առ  
էգն : Երեք սեռք գոն յանգլիականին՝ արական, իգական և  
չէզոք <sup>1</sup> :

Թիւոք անուանց երկու են, Եղական որ զմի անձն կամ զիր  
ցուցանէ . և Յոգնական որ զբազումս 'ի միասին :

Հոլովք երեք են . սեռական, տրական և բացառական <sup>2</sup> :

Թոռական անուանք ցուցանեն զչափ կամ զկարգ իրաց :

<sup>1</sup> Չէզոքն վարի 'ի խօսել անդ զիրաց և զանասնոց :

<sup>2</sup> Ի հնագոյն լեզուս հոլովք բառից 'ի ձեռն յանդից որո  
շին : Յանգլիականին վերաբերութիւն բառից ընդ միմեանս՝  
կամ 'ի շարադասութենէ նոցին 'ի յայտ դայ, կամ յաճա  
խագոյնս 'ի ձեռն նախագրաց . բաց 'ի վերջահոլով սեռա  
կանէն զորմէ յիւրում տեղւոջն ասասցուք :

Բաղարշաի Բառայանս ասին որ ստորգապէս զԹիւս նշանակեն :  
Դասական Բառայանս գլարս կամ զկարգ իրաց ցուցանեն :  
Կրկնական Բառայանս Թէ քանիցս նոյն Թիւ իցէ բազմա-  
սպասկեալ :

Ածականն դրական ասի՝ յորժամ ստորգապէս զորսկտու-  
Թիւն իրին ցուցանիցէ . Բաղարշաիան՝ յորժամ զուգակչուու-  
Թեամբ ընդ այլում զառաւելլուԹիւն կամ զնուազուԹիւն  
ցուցանիցէ . իսկ Գերարշաիան՝ եթէ ՚ի մէջ այլոց զանհամե-  
մասն նշանակիցէ առաւելլուԹիւն , կամ զայլովք առնե-  
քումբք գերազանցուԹիւն :

Գերադրականն մարԹի լինել Բաղարշաի կամ հանգիստան :  
Բացարձակն է որ ըստ ինքեան իցէ ՚ի գերագոյն աստիճանի ,  
առանց ինչ զուգակչուուԹեան ընդ այլոց . իսկ հանգիստ-  
կան որ բազգաաուուԹեամբ ընդ այլոց համարի ՚ի վեհագոյն  
աստիճանի :

Դերանունն է բառ ինչ որ դնի փոխանակ անուան՝ առ ՚ի  
չկրկնել զնոյն յաճախ :

Էական դերանունս ուղղապէս զանձինս նշանակեն :

Սքարայանս զստացումն կամ զսեպհականուԹիւն իրին  
ցուցանեն :

Յոդոյանս՝ զանձն կամ զիրն զորմէ բանքն են :

Յարբեբայանս՝ զանուէն ինչ կամ զգերանունն , զորոց յի-  
շատակ լեալ իցէ յառաջագոյն :

Արդս յընդհանուրս և անորոշակի ցուցանեն զիրս :

Բայն է բառ ինչ ցուցիչ առնելուԹեան կամ լինե-  
լուԹեան :

Դերբայ կոչն բառն որ հաղորդ է բնուԹեան բայի և  
ածականի :

Նախարարանիւնս յայտ առնեն զյարաբերուԹիւն իրաց  
ընդ միմեանս :

Մակբայն է բառ ճշդող նշանակուուԹեան անուանց , բայից ,  
նա և այլոց մակբայից :

Շարժանս վարի ՚ի կցորդել ընդ միմեանս զմասունս բանի :

Չայնարիւնիւնս զկիրս և զարժուածս հոգւոյ բարս-  
ցուցանեն :

## ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅԲՈՒԲԵՆ ԵՒ ՀՆՉՈՒՄՆ ՏԱՌԻՑ

Այբուբենն անգլիական լեզուի ունի տառս քսանև վեց որք են .

a, b, c, d, e, f, g, h, i, j, k,  
l, m, n, o, p, q, r, s, t, u, v,  
w, x, y, z.

Որոշին տառքս 'ի ձայնաւորս և 'ի բաղաձայնս .

Ձայնաւորքն են a, e, i, o, u .

Բաղաձայնք են b, c, d, f, g, h, j, k, l, m,  
n, p, q, r, s, t, v, x, z .

W և y 'ի վերջս վանկի ձայնաւորք են , իսկ 'ի սկիզբն բաղաձայնք :

Ձայնաւոր տառք զուգեալք 'ի միասին գործեն զերկբար բառս ae, ai, au, aw, ay; ea, ee, ei, eo, eu, ew, ey; ia, ie, io; oa, oe, oe, oi, oo, ou, ow, oy; ua, ue, ui uo և uy . և զեռաբարբառս eau, eou; ieu, iew, iou .

ՑՈՒՑԱԿ ՉԱՅՆԱԻՈՐ  
ՏԱՌԻՑ

ՀԳՆՈՐԱԿՈՅՆ ՀՆՉՈՒՄՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ

	1	2	3	4	
A.	Hate,	bat,	part,	hall.	
	1	2	3		
E.	Mete,	met,	her.		
	1	2	3		
I.	Fine,	fin,	stir.		
	1	2	3	4	5
O.	Note,	not,	nor,	prove,	ton.
	1	2	3	4	
U.	Cube,	cub,	burn,	bush.	

	0
Հէթ,	հէթ, փարթ, հօլ.
Միթ,	մէթ, հըր.
Յայն,	ֆին, սթըր.
	0
Նօթ,	նօթ, նօոր, փրուվ, թըն.
	0
Գիուպ,	քըպ, պըրն, պըշ.

Ձայս տախտակ ստէպ յեղյեղէսցէ աշակերտն ընդ վարժապետին, որպէս զի քաջ տպաւորեցի 'ի միտս նորա և 'ի լսելիս հնչումն ձայնիցն, զորոց զանվթար արտասանուածիւն

չէ հնար մերովք տառիւքս անվուէպ բացայայտել . և լաւ ևս է ուսանել զնոյն 'ի կենդանի բարբառոյ վարժապետի , և եթէ մարթ է 'ի նոյն իսկ յազգէ :

### ՅԱՂԱԳՍ ՉՍՅՆԱԻՈՐ ՏԱՌԻՅ

A. A հնչի <sup>1</sup> a է, կամ նուրբ է որպէս 'ի բառիս hate, այսինքն գրեա թէ յամենայն միավանկ բառս որ աւարտին 'ի e անձայն՝ հանդերձ նախընթաց միակ բաղաձայնիւ . դարձեալ 'ի բառս բազմավանկս նոյնօրինակ յանդեալս , և շեշտեալս 'ի վերջին վանկն . զոր օրինակ . <sup>1</sup> fate, <sup>1 1</sup> debate.

A հնչի <sup>2 0</sup> a է կամ սուղ է 'ի միավանկ բառս յորս զհետ իւր ունիցի բաղաձայն ևեթ , և 'ի բառս յանդեալս <sup>2</sup> able, <sup>2 2 2 2</sup> acle . զոր օրինակ flat, capable, obstacle .

A հնչի որպէս <sup>3</sup> a = բաց՝ 'ի յոլով բառս յորս հետևեալ ունի լm և lf (յայնժամ տառդ լ ոչ հնչի) . դարձեալ և 'ի բառս յորս զհետ իւր գայցէ r . զոր օրինակ <sup>3 3</sup> calm, half, <sup>3 3 3 5 3 2</sup> star, part, darksome, largest .

A հնչի <sup>4</sup> a օո- կամ օ՛ երկար 'ի բազում՝ բառս յորս զկնի իւր գայցէ տառս լ և այլ իմն բաղաձայն , բաց 'ի տառիցս m կամ f . զոր օրինակ . <sup>4 4 4 4 4</sup> fall, scald, walk, all, wall, <sup>4 0 2 4 4</sup> called, Gibraltar, bald .

E. E երկար ունի գրեա թէ միշտ զձայնս e է 'ի միավանկս . դարձեալ և 'ի բազմավանկս , և յորս զհետ իւր գայցէ բաղաձայն մի , հանդերձ միով անձայն e իւ . և ևս 'ի վերջ միավանկ բառից , յորս չիցէ այլ ձայնաւոր . օրինակ իմն . <sup>1 1 1 1</sup> scene, replete, me .

E սուղ ունի գրեա թէ միշտ զձայնս e է յորժամ իցէ  
ընդ մէջ երկուց բաղաձայնից 'ի նմին իսկ վանկի . զոր օրինակ .  
2 2  
red, berry.

E 'ի յանգս er հնչի միշտ e ը . որպէս 'ի բառիս her . զոր  
1 3 0 1 3 3  
օրինակ spider, writer, reader : սփայբըր, աճիբըր, աիբըր :

ի բառս there, where և յածանցս նոցին հնչի գոգցես  
1  
որպէս a էջ .

E 'ի վերջս բառից առհասարակ անձայն է . բաց յոմանց  
ծագելոց յերիցագոյն լեզուաց , յորս հնչի e ՚ի . զոր օրինակ  
2 2 2 1 1 1  
catastrophe, Hebe.

E 'ի յանգեալն en սղի . զոր օրինակ riven, seven .

E սղի և 'ի յանգեալն ed, յորժամ չունիցին յառաջոյ  
t կամ d . իսկ եթէ գուցեն այս տառք t կամ d, հնչի  
2 1 0 2 0 5 0 2 0 2 2 2 2  
e է , զոր օրինակ lined, answered, filled; ended, added ,  
2 1 2  
proceeded .

I. I հնչի i ա, 'ի միավանկս , և 'ի վերջ բաղմավանկ բա-  
ռից շէշտեոց 'ի վերջն վանկն , յորժամ զհետ իւր ունի  
1 1 2  
զմի բաղաձայն և զմի անձայն e . զոր օրինակ pine, tribe, di-  
1 1  
vine, title .

I ունի զհնչումն i ՚ի գրեա թէ յամենայն բառս յան-  
գեալս 'ի ice և ive, որք ոչ 'ի վերջն վանկն շէշտիցին . ևս  
և 'ի բառս յորս զհետ իւր եկեսցէ տառ բաղաձայն 'ի նմին  
2 2 2 2 2  
իսկ վանկի , բաց 'ի տառէս r . զոր օրինակ practice, incentive,  
2  
riddle.

I հնչի i ը 'ի յոլովագոյն բառս յորս զհետ իւր գայ .

ցէ սառս ր ընդ այլ բաղաձայնի 'ի վերջ վանկի. զոր օրինակ.  
3 3 3 3 3 3  
stir, bird, first, dirt, shirt, squirt և այլն:

Ձարտուղին 'ի կանոնէս միայն բառքս mirth, birth,  
2  
girt, gird, girl, skirt, whirl և firm, յորս ի հնչի որպէս e է:

0. 0 հնչի օ երկար իբր օ կամ օ- 'ի վախճան բառից  
1  
յանդէլոց 'ի բաղաձայն ինչ և յանձայն e. զոր օրինակ home,

1 2 2 1  
stone, anecdote. կամ 'ի կազմէն զվանկ շէշտիւ, զոր օրինակ

2 1 1 2 1 1 1 1 1 1  
compose, spoken, suppose, so, no, going, story, poetry,

1  
glory. դարձեալ 'ի բառս յորս զհետ շէշտեալ օ ի գուցեն

1 1 1 1 1  
ld 'ի նմին վանկի. զոր օրինակ told, old, cold, gold, soldier

1 1  
( «օ՛ւճ՛ւր » ), behold.

2 0  
0 ունի զձայնս օ սուղ օ 'ի յորովագոյն բառս յորս  
զհետ իւր կայցէ բաղաձայն ինչ աւարտիչ վանկին. զոր օրինակ

2 2 3  
նակ blot, potter.

3  
0 հնչի միշտ իբր օ երկար և նուրբ կամ իբր կրկնակ  
օ յորժամ զկնի իւր ունիցի ր աւարտիչ վանկին, եթէ

3 3 3 3 3  
վանկն այն ունիցի շէշտ. զոր օրինակ for, nor, corner, for-

3 3 1 3 2  
mer, fortune, morning.

4 4  
0 հնչի որպէս օ - 'ի սակաւ բառս և եթ. որք էն beho-

4 4 4 4  
ve, move, prove և յաճանցս նոցա. որպէս և 'ի lose, do,

2 4 4 4 0 4  
ado, who, whom, womb, Rome.

5  
0 հնչի զերթ օ շ 'ի յորով բառս, յորս զհետ իւր գու-

ցեն m, me կամ ve. զոր օրինակ kingdom, come, love.  
 կամ 'ի յանգս բառից՝ յորս օ ջիցէ շէշտեալ. զոր օրինակ  
<sup>3 5</sup> <sup>1 5</sup>  
 second, razor.

Ի բազում բառս յորս յետագաս լինին օ տառիս ր հան-  
<sup>5</sup> <sup>3</sup>  
 գերձ այլ իմն բաղաձայնիւ, հնչի նոյնպէս օ կամ u. զոր  
<sup>5</sup> <sup>2 5</sup> <sup>5</sup> <sup>2 5</sup>  
 օրինակ worst, stubborn. հնչեա wurst, stubborn.

Օ անձայն է և սղի 'ի յանգեալսն օո յորժամ չունիցի  
<sup>2 0</sup> <sup>2 0</sup> <sup>2 0</sup>  
 շէշտ 'ի վերայ. զոր օրինակ lesson, mutton, button, և այլն:

Ս. Ս 'ի բառս յորս զհետ իւր գոյ բաղաձայն մի հան-  
<sup>1</sup>  
 գերձ անձայն e իւ, կամ վերջնս ևեթ, հնչէ u ի յորժամ  
<sup>1</sup> <sup>2 1</sup> <sup>2 2 1</sup>  
 չունիցի յառաջոյ գտառդ ր. lute, illume, residue. իսկ եթէ  
<sup>4</sup>  
 գուցէ ր նախընթաց, յայնժամ u հնչի օ ու. զոր օրինակ rue  
<sup>4</sup> <sup>4</sup>  
 հնչի ro այսինքն ու, true հնչի tro Բրո:

Ս հնչի u շ 'ի բառս յորս զինի իւր ունիցի բաղաձայն  
 տառ աւարտիչ վանկին, բաց 'ի տառից լ, ր. զոր օրինակ  
<sup>2</sup> <sup>2</sup> <sup>2 5</sup>  
 stud, cub, butter.

Ս հնչի u շ յայնոսիկ բառս յորս նախընթաց գնի տա-  
<sup>3</sup> <sup>3</sup> <sup>5</sup>  
 ռիս ր, որ չունիցի զհետ իւր անձայն e. զոր օրինակ turn, fur.

Ս հնչի u ու 'ի սակաւ բառս, մանաւանդ յորս զինի  
<sup>4</sup> <sup>4</sup> <sup>1 4</sup> <sup>4</sup>  
 իւր եդեալ կան լ կամ լլ. զոր օրինակ bull, spiteful, full,  
<sup>4</sup> <sup>4</sup> <sup>4</sup> <sup>4</sup> <sup>4 25</sup>  
 pull, push, bush, puss, cushion, sugar ւ-իւր:

Y. Y ունի զձայն i ու, 'ի միավանկ բառս յորս նախ-  
 ընթաց ունիցի զբաղաձայն տառ, և 'ի վերջ ամենայն բա-

ուից՝ երբ յինքն յանդիցի շէշտ բառին, և գարձեալ յամե-  
նայն բայս յորս նախընթաց գտանիցի սառս ֆ. զոր օրինակ

dry, apply, gratify. <sup>1 2 1 2 2 1</sup> Հնչեալ dri, appli, gratifi.

Y վերջատառ ունի միշտ զձայն <sup>2</sup> i ի յամենայն բառս բազ-  
մնավանկս, յորս ինքն չիցէ շէշտեալ. բայց 'ի վանկէս ֆյ 'ի

վերջս բայից. զոր օրինակ <sup>4 2 2 2</sup> trúly, mérry Հնչեալ truli, merri.

W. W, յորժամ վարիցի որպէս զձայնաւոր տառ, ընդ  
այլում յառաջընթաց ձայնաւորի գործէ միշտ երկբարբառ :

### ՅԱՂԱԳՍ ԵՐԿԻՍՐԲՍՈՒ ՏԱՌԻՑ

AE որ 'ի բառս ինչ առեալս յերիցագունից լեզուաց միայն

վարի. <sup>1</sup> Հնչի e ի. զոր օրինակ <sup>1 2</sup> paeau Հնչի peau.

<sup>1</sup> Ai և ay Հնչին a էյ. զոր օրինակ nail, stay.

<sup>4</sup> Au և aw գրեալ թէ միշտ Հնչին a օ. զոր օրինակ pause,  
awful.

Au թէ զհետ իւր ունիցի զտառս n ընդ այլ բաղաձայնի՝  
<sup>3</sup> Հնչէ a ա. զոր օրինակ taunt, flaunt.

<sup>1</sup> Ea ընդհանրապէս Հնչի e ի. և զայս Հնչումն պահէ յոր-  
ժամ զհետ իւր եկեսցէ մին 'ի տառիցս l, m, n, p, կամ  
'ի վերջ բառին իցէ. այլ յորժամ ունիցի զկնի՝ իւր զտառս  
<sup>2</sup> d, f, st, t կամ th, յայնժամ իբր 'ի բազումս Հնչի e է-  
օրինակք. meal, beam, wean, cheap. head, deaf, breast,  
threat, death.

<sup>1</sup> Ի բառս ինչ 'ի գալ զկնի k կամ r տառից՝ ea Հնչի a էյ,  
զոր օրինակ break, bear.

<sup>3</sup> Ի գալ զկնի նորա տառիս r Հնչի երբեմն e ը զոր օրի-  
նակ earth, learn.

Ee <sup>1</sup>հնչի միշտ e ի . զոր օրինակ green .

Ei <sup>1</sup>հնչի երբեմն a է) . զոր օրինակ vein, rein, heir, eight, their, veil . Այլ առաւելապէս <sup>1</sup>հնչի e ի . և այսպէս <sup>1</sup>հնչի միշտ յորժամ <sup>1</sup>զհետ իւր ունիցի t կամ ve . զոր օրինակ de-  
12 2 12  
ceit, perceive .

Eo <sup>1</sup>հնչի e ի . որպէս <sup>2</sup>people . և երբեմն e է . որպէս <sup>0</sup>leopard .

Eo յորժամ <sup>2 0</sup>չիցէ շէշտեալ <sup>2</sup>հնչի u շ . զոր օրինակ <sup>2</sup>dú-  
2 2 2 2  
geon, lúncheon, súrgeon, stúrgeon . — Իսկ ՚ի բառս pi-  
2 2  
geon, widgeon, scútcheon, երկբարբառդ eo <sup>2</sup>հնչի ի :

<sup>1</sup>Eu և ew <sup>1</sup>հնչին u ի . զոր օրինակ eulogy, new . <sup>1</sup>հնչեա  
1 2 2 1  
ulogi, nu . եթէ նախընթաց ունիցին զտառդ r, ew <sup>1</sup>հնչի  
4 4  
որպէս o . զոր օրինակ strew, <sup>1</sup>հնչեա stro .

Ey յորժամ <sup>1</sup>ընդ շէշտիւ իցէ <sup>1</sup>հնչի a է) . եթէ առանց  
2 2 2 2 3  
շէշտի i ի . զոր օրինակ survéy, convéy; vólley, bárley .

Ia սովորաբար միայն ՚ի վերջս բառից է երկբարբառ , և  
<sup>2</sup>հնչի յայնժամ i ի յայլեայլ ձայնս a ին խառնելով . զոր  
222 2 2 2 21  
օրինակ filial, billiards պիւիշուր , expiate .

Ի բառս marriage, carriage, parliament և miniature  
<sup>2</sup>զհնչի a տառն երկբարբառին այլ միայն i ի : Բառս diamond  
հնչի պայէճնպ :

<sup>1</sup>Ie <sup>1</sup>հնչի սովորաբար e ի . այլ ՚ի միավանկս եթէ զհետ իւր

չունկիցի սառ բաղաձայն հնչի <sup>1</sup> i ա, զոր օրինակ grief, die.

հնչեա <sup>1</sup> greff. <sup>1</sup> di. <sup>1</sup>

Io յաւարա բառից հնչի <sup>2</sup> u շ եթէ ունկիցի շինի իւր զսառս  
n. զոր օրինակ <sup>1</sup> nation, <sup>2</sup> passion.

Oa հնչի <sup>1</sup> o օ. զոր օրինակ road, goat.

OE 'ի բառս ինչ փոխանցեալս ի հին լեզուաց, մերթ  
հնչի <sup>1</sup> e է և <sup>2</sup> մերթ e է :

Oe ընդհանրապէս հնչի <sup>1</sup> o օ 'ի բառս foe, throe, hoe,  
bilboes, sloe, toe: ի canoe և shoe հնչի <sup>4</sup> o ու .

Oi և oy հնչին <sup>22</sup> ընդհանրապէս որպէս oi օ, զոր օրինակ  
boil, joint, toy.

Oo հնչի <sup>4</sup> որպէս o ու . զոր օրինակ doom, boom, moon,  
soon. — ի բառս foot, good, hood, և յաճանցս ձեացեալս  
վերջադրաւս hood, որպէս և 'ի բառս stood, wood և wool,

երկբարբառդ oo հնչի <sup>4</sup> u ու . — ի բառս blood և flood հնչի

<sup>2</sup> որպէս u շ . — ի բառս door և floor որպէս <sup>1</sup> o օ 'ի բերան ան

դիւսցւոց, այլ իուլանտացիք հնչեն ըստ կանոնի <sup>4</sup> o ու :

Ou հնչի <sup>44</sup> սովորաբար որպէս ao օա . զոր օրինակ . bound,  
round, bough. — Երբեմն մանաւանդ 'ի վերջաւորութիւնս

our և ous հնչին <sup>2</sup> u շ զոր օրինակ couple, courage + ւրէճ. lá-

bour, callous. — ի բառս ինչ հնչի <sup>4</sup> որպէս o ու . զոր օրինակ

<sup>2</sup> 1 ի բառիս friend և յաճանցս նորա ie հնչի e է .

wound, youth. — Յառաջոյ տառիցս <sup>1</sup> r և l երբեմն հնչէ օ օ՛.  
զոր օրինակ court, four, soul, mould. — Յօժանդակս

would, could, should հնչի որպէս u — . — Ի վանկս aught  
և ought հնչի օ օ՛ զոր օրինակ taught, brought .

Ow հնչի սովորաբար որպէս օ օ՛ . զոր օրինակ glow, snow .  
— Ի յղով բառս հնչի որպէս ao — . զոր օրինակ brow ,  
endow .

Ua հնչի որպէս ա կամ օ — յայլ և այլ ձայնս տառիս a .  
զոր օրինակ antique, antiquary, assuage, equal, language  
և այլն . հնչեա ենիւրէն , ենիւրէն , ենիւրէն , ենիւրէն , ենիւրէն ,  
ենիւրէն .

U հնչումն յապաւել երբեմն 'ի ձայնիս ա յորժամ գուցէ  
նախընթաց տառդ ց խիստ այսինքն ի . զոր օրինակ guardian ,  
guarantee կարճիեն , կերկրի :

Ue հնչի ա յարեալ յայլ և այլ ձայնս տառիս e . զոր օրինակ  
conquest արհեստ :

Ի բառս ինչ յես տառիս ց հնչելոյ ի չհնչի տառս u . զոր  
օրինակ guest, guess . — Ի յանգս զկնի տառիցս ց և q երկ .

բարբառդ ue ոչ հնչի . ( բայց միայն 'ի բառս ague ) զոր օրինակ  
tongue, oblique .

Ui ընդհանրապէս հնչի որպէս ա յարեալ յայլ և այլ  
ձայնս ի ի . զոր օրինակ anguish, cuirass : — Ի բառս ինչ յորս  
յառաջեացէ ց խիստ ի , և տառ երկբարբառիս ոչ հնչի . զոր  
օրինակ guide, guile, guilt . — Ի բառս bruise, fruit, juice,  
pursuit, sluice և suit, տառս ի ոչ հնչի . վասն որոյ բառքս

Հնչելի են որպէս թէ գրեալ էր <sup>4</sup>broz, <sup>4</sup>frot, <sup>1</sup>juce, <sup>3</sup>pursut,  
<sup>1</sup>sluce <sup>1</sup>և <sup>1</sup>sut. այս ինքն ուրու, Քրու, Ճիւս, Բըսիւ, Սիւս  
 և Սիւս :

Սօ ունի զձայնս օ ի յարեւոյ ընդ այլ և այլ ձայնս օ ի . զոր  
 օրինակ quodlibet, aliquot . ասորիպէ, էլէաս :

Սյ ՚ի վերջաւորութիւնս զսյ Հնչի որպէս <sup>2</sup>օի . զոր օրինակ  
 obloquy, օպլուսի . Իսկ ՚ի վերջաւորութիւնս <sup>2</sup>սյ Հնչի <sup>2</sup>ի .  
 զոր օրինակ plaguy փլայի . — Բառս buy Հնչի պայ :

### ՅԱՂԱԳՍ ԵՌԱՐԱՐՔԱՌ ՏԱՌԻՅ

Eau եռաբարբառ՝ որ առաւել ՚ի վրանկական բառս վարի  
 քան ՚ի բնիկ յանգլիականս, Հնչի <sup>1</sup>օ օ՝ . զոր օրինակ beau,  
<sup>1</sup>portmanteau : — Հնչի որպէս <sup>1</sup>սիւս ՚ի բառս beauty, և  
<sup>2</sup>յաժանցս նորա beautiful .

Eou Հնչի որպէս <sup>22</sup>իւ իւ . զոր օրինակ <sup>2</sup>niveous . Հնչեա <sup>2</sup>ni-  
<sup>22</sup>viuss իւլիւս :

Ieu և iew Հնչի <sup>1</sup>սիւս . զոր օրինակ <sup>1</sup>purlieu, <sup>1</sup>adieu, re-  
<sup>3</sup>view . Հնչեա <sup>1</sup>purlu, <sup>1</sup>adu, <sup>1</sup>revu .

Iou Հնչի <sup>22</sup>իւ իւ զոր օրինակ <sup>222</sup>glorious, Հնչեա <sup>222</sup>glorius. —  
 Յետ ձայնահան բաղաձայնի սառս <sup>222</sup>ի խափանի . զոր օրինակ  
 precious Հնչեա փրէւս :



Իսկ 'ի սաքսոն բառս հնչի Է. զոր օրինակ get, gift Է՞ն, Է՞քէն :

Gh յետագաս ունեւոյ՞ զ t 'ի վերջ վանկից ոչ հնչի, բայց 'ի բառէս draught յարում հնչի որպէս քր, որպէս երբեմն և 'ի վերջ վանկից . այլ առ հասարակ անձայն է . զոր օրինակ caught, draught, bought, rought, neigh, հնչեւի են . քօռ-ն, քրօռ-ն, պօռ-ն, ուն :

Եթէ զհետ ց տառիս դոյ m կամ n 'ի նմին վանկի, ց ն ոչ հնչի . զոր օրինակ phlegm, gnash, resign, հնչեա Քէ՛ն՛, Է՛ն՛, Է՛քէն՛ : — G առ անձայն է 'ի բառիս seraglio հնչեա Է՛րէն՛ն .

H, Առ հասարակ 'ի սկիզբն բառից հնչի Կ, բայց յայտոցիկ heir, herb, herby, honest, honour, hospital, hostler, hour, humble, humour և 'ի բարդս և յածանցս իւրեանց : — Ի մեջ և 'ի վերջ վանկից որպէս և զկնի ր տառիս ոչ հնչի . զոր օրինակ Iohn, Messiah, rheum, Ճ՛ն, Մե՛սայէ, Խո՛մ . բայց յորժամ եզեաւ իցէ զկնի ֆ ի, յայնժամ հնչի յառաջ քան զ օ . զոր օրինակ what հո՛ռն, while հո՛ւսյւ :

J, հնչի Ճ . զոր օրինակ joy ճօյ : Ի բառս hallelujah հնչի յ . հէլլիւ՛յա :

K, հնչի Կ կամ Գ, 'ի սկիզբն բառից զոր օրինակ kind Կայն . բայց յորժամ զհետ իւր ունիցի n ոչ հնչի . զոր օրինակ knight Կայն, know Կօ :

L, Ի սկիզբն բառից հնչի Լ, բայց 'ի վերջ բառից սեռ հական իմն հնչումն է, զոր 'ի կենդանի և եթ բարբառոյ մարթի ուսանել : — Չկնի a ի և երբեմն ևս զկնի o ի լ նախադաս գտեալ տառիցս f, k, m, ոչ հնչի . զոր օրինակ half, stalk, calm, yolk . հա՞ք, ա՞ռ, Կա՞մ, Է՞ռ . ոչ հնչի դարձեալ 'ի բառս almond, could, should, would . ա՞մընք, Կա՞ւր, շո՞ւք, Կա՞ւրք :

M և N, հնչին Տ և Ն : — N 'ի վախճան վանկի յետագասն լինել տառիցս l և m, ոչ հնչի . զոր օրինակ kiln Կէլ, solemn Կօլէ՛ն :

P, հնչի Բ : — Ի սկիզբն բառից նախագաս լեալ տառիս t ոչ հնչի . ptisan Բէ՛րէն : — Անձայն է 'ի բառիս receipt Կէ՛քէն :

Ph 'ի միում վանկի հնչի Ք : — Ի բառս nephew և Stephen հնչի Վ . Է՛քէն, Սե՛քէն :

R, Ի սկիզբն բառից և 'ի մէջ կրկին ձայնաւորաց հնչի  
~ : Այլ առաջի բաղաձայն տառի կամ անձայն e ի , ևս և  
'ի վերջ բառից սեպհական իմն հնչումն է անթարգմանելի ;  
սակաւ ինչ կօկորդային :

S, Երբեմն հնչի ՚ի և երբեմն ~ , զոր սովորոյթ և եթ ուս  
ուցանէ : — Անձայն է տառս յայտասիկ aisle, isle, island, այլ,  
այլ, այլենք . նոյնպէս անձայն է 'ի բառիս viscount վայտանի :  
— Եթէ տառիս s յետադաս լիցին ՚ի կամ u , և նախընթաց  
վանկն որ յառաջէ քան զտառդ շեշտեալ իցէ , յայնժամ  
տառդ s մերթ շ հնչի և մերթ թ . թ հնչի եթէ նախադաս  
տառն իցէ ձայնաւոր ինչ կամ երկբարբառ . շ եթէ իցէ  
բաղաձայն . զոր օրինակ treasure Բրեթիոս , passion քեւըն ,  
extension էսնննննննն :

Sh հնչի շ . զոր օրինակ cherish շերիշ :

Sch հնչի ս . զոր օրինակ scholar սուլլ :

T հնչի Թ կամ Դ . Եթէ զկնի տառիս գուցէ eous, ious,  
u , և նախադաս վանկն շեշտեալ իցէ , հնչի շ կամ շ . զոր օրի  
օրինակ station սեյշննն , virtue վերլիս righteous ուայլիլլ : —  
Տառս t ոչ հնչի 'ի վերջադիրս sten, stle, stener, stler . զոր  
օրինակ . fasten, hastener, listener, bustler, bristle ֆէնն,  
հէնննն , լիւնննն , ոււււււււ , ուրիււ : — Անձայն է 'ի բառս  
Christmas, chestnut, mortgage . քրիսմաս , շէնննն , մորկիճ :

Th, կրկին ձայն է տառիցս խիստ և նուրբ . առ 'ի հնչել  
զառաջինն՝ դիր զծայր լեզուիդ 'ի մէջ ատամանցդ և հնչեալ s  
կամ ~ . խիսկ վասն երկրորդին արա նոյնպէս , և հնչեալ z կամ  
շ : — Th հնչի խիստ 'ի սկիզբն բառից . բաց 'ի յօդէս the և  
'ի դերանուանց և 'ի բառից there, thought և thus . — Խիստ  
հնչի ևս 'ի վերջ բառից . բաց 'ի բայից , և բառիցս booth,  
smooth, with յորս նուրբ հնչի (բայց բայս to froth հնչի  
խիստ) : — Խիստ հնչի ևս 'ի մէջ բառից յորս յառաջոյ կամ  
յետոյ գուցէ տառ բաղաձայն . բաց 'ի բառէս smoothness .  
— Ի բառս ինչ ըն հնչի որպէս սարդ t . զոր օրինակ Antho  
ny, Thames, thyme Էնթոնի , Թեմս , Թայմ : — Ի Բառարանն  
անգղիարէն և հայերէն խիստ հնչումն տառիս բացադրեալ է  
հոյակական տառիւքս Թն . խիսկ նուրբն քն :

V, Միշտ հնչի վ . և սարս է որոշել զսա 'ի հնչմանէ ,  
հեասագայ տառիս ֆ ~ . զոր օրինակ vine վայն :

W. Ի սկիզբն բառից հնչի ու . զոր օրինակ we հնչի ուի : — Նախագաս լեալ տառիս ր 'ի նմին վանկի՝ ոչ հնչի . զոր օրինակ wreath , wring ուիս , ուիի . — Անձայն է և ս 'ի բառս answer , sword էնւր , ուրս :

X, հնչի խիստ ու կամ նուրբ իւ . խիստ՝ յորժամ շեշտն 'ի վերայ նախընթաց վանկին անկանիցի . և նուրբ՝ յորժամ ձայնաւոր ինչ շեշտաւոր յետագաս լինիցի . զոր օրինակ éxstant , exért էսւիէնի . էիւէրի : — Ի նախագաս լինել շեշտին և յետագաս տառիցս իօ կամ ս , տառս x խիստ հնչի որպէս ու . զոր օրինակ nóxious , ուուչու : Իսկ եթէ յետագաս գտցի ս շեշտաւոր՝ հնչի նուրբ կամ իւ . զոր օրինակ luxúrious լւիւիւուիւիւ : — Դարձեալ 'ի սկիզբն յունական անուանց x հնչի ու . զոր օրինակ Xanthus , Xenophon , Xerxes .

Y, Ի սկիզբն բառից հնչի է . զոր օրինակ youth էսւիս , year էր :

Z, հնչի ու . զոր օրինակ . lazy , լէուի : — Ի նախագաս լինել նմին շեշտի , և 'ի յետագաս իօ , իե , իօ , իօս , օս տառից , և ure վերջաւորութեան՝ հնչի ծ . զոր օրինակ séizure ուիիւիւիւիւ , rázure ուիիւիւիւիւ , glázier կէնիւիւ :

### Յ Ա Ղ Ա Գ Ս Շ Ե Շ Տ Ի Յ 1

Շեշտն է կէտ իմն և կամ նշան եղեալ 'ի վերայ ձայնաւոր տառից՝ 'ի վերստստուսն ձայնի 'ի վանկս ինչ բառից 2 :

#### Յաղագս կրկալանկ յառից

Երկավանկ բառք ածանցեալք վերջադիր մասնկամբք՝ շեշտին սովորաբար յառաջին վանկն . զոր օրինակ tálker , mírthful , ևն :

1 Առաջիկայ հասուածդ յաղագս շեշտից առեալ է 'ի Բերականութենէ Սամ . Ճմնարնի :

2 Ոչ թէ վանկն շեշտեալ առաւել սրաձայն արտասանելի իցէ , այլ քան յայլ վանկս առաւել իմն զօրութիւն տալով ձայնին , որպէս յայտ է :

Երկավանկք ածանցեալք յառաջագիր մասնկամբք յարմատականն, սովորաբար առնուն զէշտ 'ի վերջին վանկն . զոր օրինակ to begét, to behóld, ևն :

Երկավանկք որք միանգամայն իցեն անուն և բայ, սովորաբար 'ի լինելն անուն՝ շէշտին յառաջին վանկն, և 'ի լինելն բայ՝ 'ի յետինն . զոր օրինակ an áccent շէշտ մ, to accént շէշտ եւ :

Ամենայն երկավանկք որք յանգին 'ի *γ*, our, ow, le, ish, ck, ter, age, en, et, er շէշտին յառաջին վանկն . զոր օրինակ silly, fávour, willow 1, báttle, to bánísh, cás-sock, to báttér 2, cóurage, fásten, quiet, cánker, búttér .

Բայք երկավանկք յանգեալք 'ի բաղաձայն մի և 'ի *e* անձայն, կամ որք ունիցին երկբարբառ մի 'ի յետին վանկն, կամ որք յանգին յերկուս բաղաձայնս, սովորաբար շէշտին 'ի վերջին վանկն . զոր օրինակ to compríse, to revéál, to atténd .

Անուանք երկավանկք որք ունիցին երկբարբառ մի 'ի վերջնում վանկի, անդանօր և շէշտին յաճախ . զոր օրինակ appláuse 3 .

### Յադագս տալիսնկ բառից .

Եռավանկք բառք ածանցեալք յառաջագիր կամ վերջագիր մասնկամբք՝ առնուն զէշտ 'ի վերայ արմատական բառին . զոր օրինակ lovelíness, contémner, bespátter, ևն :

Եռավանկք յանգեալք 'ի ous, al, ion, ce, ent, ant, ate, շէշտին յառաջին վանկն . զոր օրինակ grácíous, cápítal, méntion, cóntinence, ármament, élegant, própágate 4 .

1 Արտաբոյ էն կանոնիս to allów, to avów, to endów, to bestów .

2 Զարտուղի բայս to detér .

3 Զարտուղին բառք ոմանք յանգեալք 'ի ain . զոր օրինակ certáin, móuntain, ևն :

4 Բաց յեռավանկից յանգելոց 'ի ce, ent, ate, յաճանցելոց 'ի բառից՝ որոց շէշտն 'ի վերջին վանկն իցէ . կամ որք 'ի միջին վանկն ունիցին ձայնաւոր մի հանդերձ յետագաս կրկին բաղաձայնիւք . զոր օրինակ connívance, promúlgate .

Եռաձևանկէ յանգեալք 'ի *γ, re, le, ude* շէշտին յաճախ յառաջին վանկն . զոր օրինակ *liberty, théâtre, légible, plénitude* .

Եռաձևանկէ յանգեալք 'ի *ator* որպէս *creator* , կամ որք 'ի միջին վանկին ունին երկբարբառ ինչ , զոր օրինակ *endéavour* , կամ զհետ ձայնաւորի կրկին բաղաձայնս , որպէս *domestic* , շէշտին սովորաբար 'ի միջին վանկին :

Եռաձևանկէ բառք բնիկ փրանկականք՝ որպէս *repartée, magazine* , շէշտին յաճախ 'ի վերջին վանկն :

### Յաղագս բազմախանկ բառից .

Բազմաձևանկ բառք շէշտին յարմատական բառսն յորմէ ածանցեալք են . զոր օրինակ *arrogating, continency, incontinently, communicableness* .

Բազմաձևանկէ յանգեալք 'ի *ion* շէշտին 'ի վերայ վերջն թերին . զոր օրինակ *perturbation* . — Յանգեալքն 'ի *ator* շէշտին 'ի վերջն թերն . զոր օրինակ *spectator* , ևն :

Բազմաձևանկէ յանգեալք 'ի *le* շէշտին սովորաբար յառաջին վանկն . զոր օրինակ *amicable* . Բայց եթէ յերկրորդ վանկին իցէ ձայնաւոր մի նախագաս երկուց բաղաձայն տառից՝ յայնժամ և շէշտն յերկրորդ վանկն յայն անկանի . զոր օրինակ *combustible* .

Բազմաձևանկէ յանգեալք 'ի *ous* կամ 'ի *ty* շէշտին 'ի նախընթաց վանկ վերջն թերին <sup>1</sup> . որպէս *uxorious, volutuous, pusillanimity, activity* .

---

<sup>1</sup> Նախընթաց վերջն թեր վանկի ասի՝ երրորդ վանկն սկսեալ 'ի վերջէ բառին . իսկ վերջն թեր երկրորդն :

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

### Կ Ա Ն Ո Ն Ք Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ք

Ուղղագրութիւնն է կարևորագոյն մասն լեզուագիտութեան , զի առանց այնր դժուարին է ուղղախօսել , իսկ գրել ամենևին իսկ անհնարին . մանաւանդ յայն բարբառս որոց հնչումն օտար է ամենևին գոգցես 'ի գրութենէ տառիցն . յայսմ անգլիականս անցանէ զանցանէ քան զամենայն լեզուս դժուարութեամբն . վասն որոյ ուշով պարտ է 'ի միտ առնուլ զհանրական կանոնս զորս աւանդեմք աստանօր 1 :

Ա . Բառք միավանկք յանգեալք 'ի f , l , s , և որ նախ ընթաց ունիցին զմի ևեթ ձայնաւոր , կրկնեն զվերջին բաղաձայնն . զոր օրինակ staff Գաստան , stiff խիստ , mill աղօրիտ , hall սրահ , cross խաչ , to pass անցանել , ևն :

Ձարտուղին միայն բառքս . of հորովանիչ սեռ . if եթէ , as որպէս , he is նա է , he has նա ունի , he was նա էր , his նորս , this այս , us մեք , thus այսպէս :

Յորժամ բաղաձայնն վերջին երկբարբառ ինչ ունիցի յաւաջոյ՝ ոչ ևս հպատակէ կանոնիս . զոր օրինակ proof քիչ , wool գեղճն , yes այո , ևն :

Բ . Միավանկք յայլ բաղաձայն տառս յանգեալք (արտաքոյ f , l , s , տառից ) ոչ կրկնեն զբաղաձայնն վերջին . զոր օրինակ far հեռի , fat գէր , bed անկողին , mob առօրի , fog ճառախոսող , sun արեգալին :

1 The orthography of the english language is attended with much uncertainty and perplexity. But a considerable part of this inconvenience may be remedied , by attending to the general laws of formation ; and , for this end , the learner is presented with a view of such general maxims in spelling primitive and derivate words , as have been almost universally received.

Ջարտուղին միայն բառքս abb բարդ մանեալ, to add յաւելալ, to ebb մալընթանալ, butt նշաւակ, egg յոս, odd նաճար, to err մալրել, inn օթան, bunn բնիշ, to purr մանել, buzz Բզլիւն :

Գ. Բառք միավանկք և որք 'ի վերջին վանկն շեշտիցին, և յանգեալքն 'ի մի ևեթ բաղաձայն հանդերձ նախընթաց միով ևեթ ձայնաւորաւ, կրկնեն զբաղաձայնն յաժանցսն, եթէ վերջագիր մասնիկն սկսանի ձայնաւոր սառիւ. զոր օրինակ col հիւշ, cottage քաղաւար, wit հանճար, witty հանճարէշ, thin վրիպ, thinnish սալա- մի վրիպ, to begin սկսուել, beginning սկիզբն, to permit շնորհել, permitted շնորհեալ :

Բառք երկավանկք և բազմավանկք ոչ կրկնեն զբաղաձայնն յեօին յաժանցս, յորժամ շեշտն չիցէ 'ի վերջին վանկն. զոր օրինակ hermit առադարար, hermitage ճգնաբան, to merit արժանաւորել, mériting արժանաւորելու, merited արժանաւորեալ :

Դ. Տառք չ 'ի վերջ բառից՝ նախընթաց ունելով զբաղաձայն գիր, փոխի 'ի ie 'ի յոքնականս, 'ի բաղդատականս և 'ի գերադրականս, յերկրորդ և յերրորդ դէմս եզակի սահմանականին և յանցեալ գերբային. զոր օրինակ fly ճանճ, flies ճանճք, happy երջանիկ, happier երջանկագոյն, to carry Բեբել, he carries նա Բեբէ, to apply յարել, he applied նա յարեաց, ևն :

